ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/26

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.01.2019թ. թիվ 27/26-3/1292-19 գրությամբ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.01.2019թ. թիվ 022/26 գրության հիման վրա, 31.01.2019թ. «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 23.01.2019թ. թիվ 022/26 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար 07.12.2018թ. դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Բոլոր մասնակից ընկերություններին 18.12.2018թ. ծանուցվել է 21.12.2018թ. մասնակցել բանակցային գործընթացին՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝ 40-րդ կետի 5-րդ մասի պահանջի համաձայն: Պատվիրատուի կողմից 24.12.2018թ. առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 27.12.2018թ. ներառյալ ներկայացնել Կարգի 32-րդ կետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը: Նույն օրը՝ 24.12.2018թ. հարցում է ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած ընկերությունների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. ստացված եզրակացության համաձայն «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող հարկային պարտավորություն:»:

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 07.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 14.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.12.2018թ. հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (14.12.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավո¬րություններ՝ 837.682 ՀՀ դրամի չափով:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 16.01.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշվել է, «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. տրամադրված եզրակացության հիման վրա, համաձայն որի «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ 837.682 ՀՀ դրամի չափով:

Հայտնում ենք, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 837.682 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է հայտը ներկայացնելու օրվանից՝ 14.12.2018թ. հետո, այն է՝ 21.12.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության ԱՀՔ-ում վերահաշվարկ կատարելու և պարտավորությունները Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխանեցվելու հետևանքով, որի արդյունքում «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առաջացել է 837.682 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որն էլ արձանագրվել է ԹՀ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով Ընթացակարգի շրջանակներում Պետական եկամուտների կոմիտե-ի կողմից 27.12.2018թ. (այսինքն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 21.12.2018թ. Ընկերության ԱՀՔ-ում փոփոխություններ կատարելուց հետո) տրված եզրակացությամբ:

Քանի որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 14.12.2018թ., այսինքն հայտ ներկայացնելու օրը, որևէ հարկային պարտավորություն չի ունեցել և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված հարկային պարտավորության մասին տեղեկացվել է Պատվիրատուից նշված Ընթացակարգի շրջանակներում, ուստի Ընկերությունը 24.12.2018թ. այս խնդրի կապակցությամբ հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

Ի պատասխան վերոնշված հարցմանը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 16.01.2019թ. պատասխանել է հետևյալը՝

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

28.10.2018թ. դրությամբ ծրագրային խնդրով պայմանավորված «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ, այդ պատճառով ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից տրամադրված «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքում պարտավորություններ առկա չեն: 21.12.2018թ. կազմակերպության ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին»:

24.12.2018թ. «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն կրկին հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե. որով խնդրել է պարզաբանել հետևյալ հարցերը.

1. 14.12.2018թ. դրությամբ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ առկա 836.472 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը արդյոք առաջացել է 21.12.2018թ. վերահաշվարկ կատարելու արդյունքում և հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին պարտավորությունները համապատասխանեցվելու արդյունքում:

2. Եթե 21.12.2018թ. վերահաշվարկ կատարելու արդյունքում «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի անձնական հաշվի քարտում ժամկետանց պարտավորությունը հաշվարկվել է 21.12.2018թ. հետո, ապա արդյոք նշված 836.472 ՀՀ դրամ պարտավորությունը Ընկերության համար կարող էր տեսանելի լինել 14.12.2018թ.:

3. Մինչև Ձեր 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 գրությամբ մատնանշված 21.12.2018թ. վերահաշվարկ կատարելը արդյոք «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ 14.12.2018թ. դրությամբ առկա է եղել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ի պատասխան վերոնշված հարցմանը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությամբ պատասխանել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտե Հարկային մարմնի պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

Տեղեկացնեմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԳՀՇՁԲ-2018/2-ԵՊԲՀ գնման ընթացակարգերի ծրագրով ներկայացված հարցման պատասխանի համաձայն՝ գնման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (12.12.2018թ.) «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ պարտավորություններ առկա չեն եղել, իսկ 12.12.2018թ. մինչև 14.12.2018թ. ընկած ժամանակահատվածում կազմակերպության կողմից պարտավորություններ առաջացնող հաշվարկ-հաշվետվություններ չեն ներկայացվել:

Ծրագրային խնդրով պայմանավորված՝ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ և 21.12.2018թ. կազմակերպության ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են Հարկային օրենսգքրով սահմանված դրույթներին, հետևաբար 14.12.2018թ. դրությամբ վերահաշվարկի արդյուքները կազմակերպությանը չէր կարող տեսանելի լինել»:

Այսպիսով, «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 14.12.2018թ. հայտ ներկայացնելով «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել և չէր կարող տեղյակ լինել նման պարտավորության մասին, քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված 837.682 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը առաջացել է 21.12.2018թ. հետո՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպության ԱՀՔ-ում կատարված վերահաշվարկների և պարտավորությունները Հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխանեցնելուց հետո, և նշված պարտքը, ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրության, 14.12.2018թ. չէր կարող տեսանելի լինել Ընկերության համար:

Արդյունքում, «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին վերագրվել է վերահսկվող եկամուտների գծով այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություններ, որոնք դեռևս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գոյություն չի ունեցել և Ընկերությունը կարող էր տեղեկացվել այդ հարկային պարտավորության մասին՝ միայն 21.12.2018թ. հետո, ինչը փաստվում է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վկայակոչված գրությամբ:

Նման պայմաններում գտնում ենք, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ է. Սարգսյանին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի կողմից իրականում եղել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրված հարկային պարտավորության վերաբերյալ տեղեկացված չլինելու հանգամանքը: Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրության համաձայն՝ 12.12.2018թ. «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ պարտավորություններ առկա չեն եղել:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին չվերագրել ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/26 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 31.01.2019թ. թիվ 27/26-3/1292-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 23.01.2019թ. թիվ 022/26 գրությունը և կից փաստաթղթերը,

ԹՀ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԹՀ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 14.12.2018թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 2 և 16.01.2019թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի կողմից 07.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի կողմից 24.12.2018թ. և 23.01.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված գրությունները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 և 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությունները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. տրված եզրակացությունը.

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԹՀ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԹՀ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերության գնային առաջարկը 15-րդ չափաբաժնի մասով կազմել է 489.600 ՀՀ դրամ, 28-րդ չափաբաժնի մասով՝ 444.000 ՀՀ դրամ, 37-րդ չափաբաժնի մասով՝ 183.600 ՀՀ դրամ և 39-րդ չափաբաժնի մասով՝ 38.400 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 14.12.2018թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 1.8 կետով որոշել է Ընթացակարգի 15-րդ, 28-րդ, 37-րդ և 39-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին:

- նույն կետով որոշել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 837.682 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 16.01.2019թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջները, որոշել է «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 24.12.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՎԱՀ թիվ 20 բաժնի կողմից 28.10.2018թ. դրությամբ տրամադրված «Հարկային մասրմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքում որպես միասնական հաշվում առկա գումար նշված է 5942 ՀՀ դրամ, ԱԱՀ դեբետային մնացորդ 4.010.319 ՀՀ դրամ:

30.10.2018թ. առ այսօր «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել ճշգրտող հաշվարկ-հաշվետվություններ, սակայն այս պահին taxservices.am կայքում 30.10.2018թ. դրությամբ միասնական հաշվում արտացոլվում է մոտ 182.212 ՀՀ դրամի պարտավորություն, ԱԱՀ դեբետային մնացորդ՝ 5.832.531 ՀՀ դրամ:»

«ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն շարունակաբար մասնակցում է պետական գնումների, Ընկերության նկատմամբ հնարավոր կիրառելի իրավական և ֆինանսական հետևանքներից խուսափելու համար՝ խնդրում եմ կատարել պատրավորությունների շուտափույթ ճշտում:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ի պատասխան «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի 24.12.2018թ. գրության 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

28.10.2018թ. դրությամբ ծրագրային խնդրով պայմանավորված «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ, այդ իսկ պատճառով ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից տրամադրված «Հարկային մասրմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքում պարտավորություններ առկա չեն:

21.12.2018թ. «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվաարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին:»:

«ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 23.01.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի 24.12.2018թ. գրության՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 գրությամբ հայտել է հետյալը.

28.10.2018թ. դրությամբ ծրագրային խնդրով պայմանավորված «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ, այդ իսկ պատճառով ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից տրամադրված «Հարկային մասրմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքում պարտավորություններ առկա չեն: 21.12.2018թ. «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են հարկային օրենսգրքով սահամված դրույթներին:

Վերոհիշյալ հաշվարկի արդյունքում «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ 14.12.2019թ. առաջացել է 836.472 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որը արտացոլվել է Ընկերության անձնական հաշվի քարտում 21.12.2018թ. հետո:

Տեղեկացնում ենք, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 14.12.2018թ. մասնակցության հայտեր է ներկայացրել «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 և Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂԱՏՈՒՆ-2019 ծածկագրերով ընթացակարգերին: Ընդ որում, մասնակցության հայտը ներկայացնելիս՝ Ընկերությունը ուսումնասիրել է ԱՀՔ-ում առկա տեղեկատվությունը, ըստ որի Ընկերությունը 14.12.2018թ. դրությամբ չի ունեցել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ ժամկետանց պարտավորություն:

Սակայն նշված մրցույթի շրջանակներում Պատվիրատուի կողմից կատարվել է հարցում, որին ի պատասխան տրվել է եզրակացություն առ այն, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն 14.12.2018թ. դրությամբ ունի ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք հայտնել.

1. 14.12.2018թ. դրությամբ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ առկա 836.472 ՀՀ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը արդյոք առաջացել է 21.12.2018թ. վերահաշվարկ կատարելու արդյունքում և հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին պարտավորությունները համապատասխանեցվելու արդյունքում:

2. Եթե 21.12.2018թ. վերահաշվարկ կատարելու արդյունքում «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի անձնական հաշվի քարտում ժամկետանց պարտավորությունը հաշվարկվել է 21.12.2018թ. հետո, ապա արդյոք նշված 836.472 ՀՀ դրամ պարտավորությունը Ընկերության համար կարող էր տեսանելի լինել 14.12.2018թ.:

3. Մինչև Ձեր 18.01.2019թ. թիվ 6-2/3314-19 գրությամբ մատնանշված 21.12.2018թ. վերահաշվարկ կատարելը արդյոք «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ 14.12.2018թ. դրությամբ առկա է եղել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրությամբ ի պատասխան «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի 23.01.2018թ. գրության հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի պարտավորությունների մարման և անձնական հաշվի քարտի վարման էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2018թ. և ըստ անհրաժեշտության համակարգում կատարվում են փոփոխություններ:

Տեղեկացնում եմ, որ ՀՀ ՊԵԿ-ում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԳՀԾՁԲ-2018/2-ԵՊԲՀ գնման ընթացակարգերի ծրագրով ներկայացված հարցման պատասխանի համաձայն գնման հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 12.12.2018թ. «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի մոտ պարտավորություններ առկա չեն եղել, իսկ 12.12.2018թ. մինչև 14.12.2018թ. ընկած ժամանակահատվածում կազմակերպության կողմից պարտավորություններ առաջացնող հաշվետվություններ չեն ներկայացվել:

Ծրագրային խնդրով պայմանավորված «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ և 21.12.2018թ. կազմակերպության ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են հարկային օրենսգրքի սահմանված դրույթներին, հետևաբար 14.12.2018թ. դրությամբ վերահաշվարկված արդյունքները կազմակերպության համար տեսանելի չէին:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. տրված եզրակացության համաձայն «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (14.12.2018թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ արձանագրված հարկային պարտավորության մասին տեղեկացել է Պատվիրատուից նշված Ընթացակարգի շրջանակներում, որից հետո հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե և ի պատասխան վերջինիս հարցմանը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ 21.12.2018թ. Ընկերության ԱՀՔ-ում կատարվել է վերահաշվարկ և պարտավորությունները համապատասխանեցվել են հարկային օրենսգրքով սահմանված դրույթներին, որի արդյունքում «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին վերագրվել է վերահսկվող եկամուտների գծով այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություն, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գոյություն չի ունեցել և Ընկերությունը կարող էր տեղեկացված լինել այդ հարկային պարտավորության մասին միայն 21.12.2018թ.:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2019/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ

հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 27.12.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (14.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 837.682 ՀՀ դրամ գումարի չափով:

- Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 02.02.2019թ. թիվ 6-2/7331-19 գրության՝ ծրագրային խնդրով պայմանավորված «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի ԱՀՔ-ում եղել են անճշտություններ և 21.12.2018թ. կատարվել է վերահաշվարկ, որի արդյունքում ի հայտ է եկել Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (14.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց

պարտավորությունն առաջացել է Ընկերության ԱՀՔ-ում 21.12.2018թ. կատարված վերահաշվարկից հետո և առաջացած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ժամկետանց պարտավորության առկայության մասին Ընկերությունը չէր կարող տեղյակ լինել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության կողմից անկանխատեսելի իրավիճակից բխող հետևանքի առաջացման հանգամանքով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2019թ. թիվ 27/26-3/1292-19 գրությամբ «ԷՍԿՈՒԼԱՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ